№ 206 ԿԻՐԱԿԻ, 19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում դիմում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Խմբագրատան տէլէֆօն № 253.

ՀԱՆԳՈՒՅՑԵԱԼ

ԲԱՂԴԱՆ ՄՕՒՍԷԵՎԻՉ ԴՕԼՈՒԽԱՆԵԱՆԻ

երկար ժամանակայ արդիւնաւէտ և եռանդուն ազգային-հասարակական գործունէութիւնը համակրողների մի խումբ յայտնում է ի գիտութիւն նրա յիշատակը յարգողների, որ այսօր, կիրակի, սեպտեմբերի 19 ին, Վանքի մայր եկեղեցում, պատարագից յետոյ, ժամը 12-ին կատարվելու է

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ։

Կիրակի, սեպտեմբերի 19-ին

ԲԱՂԴԱՆ ԴՕԼՈՒԽԱՆԵԱՆԻ

թաղման օրը Վանքի Մայր եկեղեցում կը մատուցվի պատարագ և կը կատարվի հոգեհանգիստ, որի մասին Մարգարիտ Աբրահամը իր քոյրերի հետ ցաւօք սրտի յայտնում է հանգուցեալի ազգականներին և յարգողներին։ Պատարագի սկիզբն է առ. ժամը 10-ին, իսկ հոգեհանգիստը՝ ժամը 11½-ին։ 2—2

Կիրակի, սեպտեմբերի 19-ին, հանգուցեալ

ՓԱՇՕ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ ԵԴԻԳԱՐԵԱՆՑԻ

մահվան քառասնօրեակին, Թանդոյեան ս. Աստուածածնի եկեղեցում (ըստ լատինական դպրոցի դիմաց) կը կատարվի հոգեհանգիստ և պատարագ, որի մասին խորին վշտով յայտնում են իրանց ազգականներին, ծանօթներին և բարեկամներին հանգուցեալի կինը՝ Սօֆիա, որդին՝ Սարգիս և հարսը՝ Եղիսաբէթ ԵԴԻԳԱՐԵԱՆՑՆԵՐԸ։ Պատարագի սկիզբը առաւօտ. ժամը 11-ին, իսկ հոգեհանգստինը՝ ժամը 12½-ին։
1093. 2—2

Հայրիկ և Վահագն Վահանեանները ցաւօք սրտի յայտնում են ազգականներին և բարեկամներին իրանց սիրելի քրոջ՝

ԻՍԿՈՒՀԻ ՎԱՀԱՆԵԱՆԻ

վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ սեպտեմբերի 7-ին Սուխում քաղաքում և թաղված է այնտեղ։
Այս առիթով ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ կը լինի փոխանակ Մողնու ս. Գեորգ եկեղեցում, Զգրաշէնի եկեղեցում այսօր՝ կիրակի, սեպտեմբերի 19-ին, ցեր. ժամը 12-ին։
1—1

ԴԱՇՆԱԿԱՀԱՐ

ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ

(կ.) առ. Ելիզավետինսկայա, № 40. 985. 20—10

Adresse télégraphique ANITAS

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱՏԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ Ա. ՌԵՒԻՏՐԻ ԹԻՖԼԻՍ, ԲԱԳՈՒ, ԲԱԹՈՒՄ.

ՄԱԳԳԻ

Բուլիսն խորանարդների մէջ

Ֆաբրիկայի «ԽԱՂ-ԱՍՏՂ» դրոշմով։

ՀԱՏՐ 4 ԿՈՊ.

Адресъ телеграммъ САНИТАСЪ Тифлисъ

առ. 1065. 1—1

РОՒՍԱԿԱՆ ԸՆԿ. „ՇՈՒԿԵՐՏ եւ ԿՕՄ.“ ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Պետերբուրգի „ՍԻՄԷՆՍ եւ ԳԱԼՍԿԷ“ ռուսական էլեքտրո-տեխնիկական գործարանների ակց. ընկ., Բերլինի „ՍԻՄԷՆՍ եւ ԳԱԼՍԿԷ“ ակց. ընկ., Բերլինի „ՍԻՄԷՆՍ ՇՈՒԿԵՐՏ-ԱԼԷՐԿԷ“ ակց. ընկ., Կոլոմէնի մեքենագործական ընկ. եւ Եղբ. „ԿՐՕՍԼԷՅ“ անգլիական գործարանի ներկայացուցիչներ։

ՁԱՓՄԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ — ՀՈՍԱՆՔԱՇԱՓ, ամպերմէտրներ, վոլտմէտրներ և ամեն տեսակ հաշուեցոյց ապպարատներ փոփոխվող և մշտական հոսանքի համար։

ԷԼԵՔՏՐՕ-ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ — „ԸՆՏԳԻՆԻ“ ապպարատներ բոլոր պատկանելիքներով։ Միաւորող ապպարատներ՝ ԿՈՒՄՍԹՈԿԻ, ԳԱԼՎԱՆՈՇԱՇԱԾՈՑԻ, ԷԼԵՔՏՐՕԼԻԶԻԾԻ, ֆարադիզացիայի համար, եւ այլն։

ԱՎՏՕՄՕԲԻԼՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ — Ավտոմոբիլներ «ՊՐՕՏՕՍ», էլեքտրաշարժ և բենզինաշարժ։ „Մոտորնի մակոյկներ“։ Ավտոմոբիլային պատկանելիքներ։

ՇԱՐԺԻՉՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ — Էլեքտրական շարժիչներ „ԴԻԶԷԼԻ“—հում նաւթի, մազութի համար և այլն, միանգամայն ձեռնտու։ Գազային շարժիչներ «ԳԻԻԼԴԵՆԷՖԻ»։ Նաւթային, կէրոսինային, գազային շարժիչներ „ԿՐՕՍԼԷՅԻ“։

ՊԱՀԵՍՏՈՒՄ կան՝ դինամո-մեքենաներ, էլեքտրաշարժիչներ, հաղորդիչներ, զանազան տեսակ նիւթեղեններ էլեքտրական կառուցուածքների համար և այլն։

ՊՐԻՑՈ-ԿՈՒՐԱՆՏՆԵՐԸ և ՆԱԽԱՀԱՇԻՒՆԵՐԸ ուղարկվում են ըստ առաջին պահանջման։

Տէլէֆօն № 533. Հասցէն հեռագիրների համար՝ Шукертъ, Тифлисъ.

№ 2. (կ.) (առ.) 433. 26—12

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ Գոգոլեան օրիորդաց դպրոցը այս ուսումնական տարվանից

ՎԵՐԱԾՎԱԾ Է ԳԻՄՆԱԶԻՈՆԻ

(Вѣдомства учрежденій ИМПЕРАТРИЦЫ МАРІИ). Առայժմ բացված են երկու նախակրթարանները և առաջին հինգ դասարանները։
Դպրոցը հեռաւորների համար ունի նաև օթեւան բոլոր յարմարութիւններով։
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է։ Մանրամասն տեղեկութիւններ կարելի է ստանալ գիմնազիոնի պաշտօնատնից (կանցելեարիայից)։
(շ.չ.կ.) (առ.) 1063. 3—3

Թիֆլիսի Ժողովարան

ԱՄԱՐԱՅԻՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԻՐԱՎԱՆՉԻՐ ՇԱԲԱԹ

տեղի կունենայ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՁՈՐՍ ԵՐԵԿՈՅԹ

Սրեբճաբթի օրերը՝ ԼԱՐԱՆՈՒԱԾ ԽՈՒՄԲ, ՍԱՂԱՆԴԱՐ, ՊԱՐԵՐ։
Հինգշաբթի և շաբաթ օրերը՝ ԼԱՐԱՆՈՒԱԾ ԽՈՒՄԲ։
Կիրակի օրերը՝ ՍԻՆԵՄԱՏՕԳՐԱՖ և ՍԱՂԱՆԴԱՐ։
Հիւրերը՝ անդամների յանձնարարութեամբ՝ մուտքի համար վճարում են—տղամարդիկ 1 ռուբ., կանայք 50 կ.։
ԱԶԴ.—Երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ երեկ. ժամը 6—8-ը՝ բեխանների համար—ՊԱՐԵՐ։
(կ.) առ. 726. 0—15

Ռուսաց Երաժշտական Ուսումնարանի

ՊՐՕՖԷՍՍՈՐ Է. ԲՐՕԶԶԻ

Բացի ուսումնարանից՝ տալիս է ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՆ մասնաւոր դասեր նաև իր բնակարանում։ Տեսնել կարելի է առ. ժամը 10—2-ը և 4—8-ը երեկ.։ Հասցէն՝ Театральный пер., № 10.
(օ.ժ.) առ. 967. 15—12

Կովկասի Հայոց Դպր. Ուսուցիչների և Վարժուհիների ՄԻՈՒԹԵԱՆ

ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է

Վելիամինովսկայա փողոց, № 8. ուր գտնվում է «ՆՈՐ ԴՊՐՈՑԻ» խմբագրատունը։
Գրասենեակը բաց կը լինի ամեն օր, երեկ. ժամը 5—7-ը, իսկ կիրակի և տօն օրերին՝ առաւ. ժամը 10—1-ը։
(հ. շ.) առ. 1083. 2—2

ԲԺԻՇԿ

Ա. Մ. ՄԿՐՏՉԵԱՆՑ

Նախկին ասիստէնտ կնախաս. կլինիկայի Մոսկ. Պ. Համ.։ Կանանց հիւանդութիւններ և մանկաբարձութիւն։ Բժշկ. ֆիզիկական մեթոդ։ Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր՝ 12—1 ժ. ցեր.—ժամանակաւորապէս Բէքուսովսկայա փող. 58, Կանանց հիւանդանոց, տէլ. № 230. իսկ սեպտ. 28-ից՝ Վելիամինովսկ. 24.
(հ.շ.ե.) առ. 1077. 5—2

ԲԺԻՇԿ

ԱՐՏԱՇԷՍ ՇԽԵԱՆ

վերադառնալով արտասահմանից վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը իր ՆՈՐ ԲԸՆԱԿԱՐԱՆՈՒՄ, Դանովսկայա փողոց № 15.
(ու. կ. չ.) (առ.) 1061. 5—5

ՇԱՐԻԱԹ ԹԷ՞ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Անցեալ անգամ խօսելով Թիւրքական կառավարութեան պահանջի մասին՝ վերացնել, չնջել կապիտիւլասիօնները կամ այն դաշնագրերը, որոնք ապահովում են արդարադատութեան կիրարկումը Թիւրքիայում եւրոպական և քրիստոնեայ հպատակների համար, մենք ցոյց տուինք, որ վաղաժամ պէտք է համարվի կատարել այդ պահանջը, քանի որ դեռ չը կան հաստատ, անհերքելի ապացոյցներ, թէ Թիւրքիան, հրատարակելով թղթի վրա սահմանադրութիւն, ստեղծելով պարլամենտ, դարձել է իսկապէս սահմանադրական և պարլամենտական։

Իսկական պարլամենտական և սահմանադրական ըէժիմը հաստատվում է իրական գործադրութեամբ մի քանի էական սկզբունքների, որոնք ամեն մի սահմանադրութեան և պարլամենտարիզմի էութիւնն են կազմում։ Այդ սկզբունքներից մինն ևս խղճի, հաւատի ազատութիւնն է։

Եւ ահա մի դէպք, որ ցոյց է տալիս, թէ որքան յարգված և ճանաչված է այդ էական սկզբունքը իրան սահմանադրական համարող Թիւրքիայում։ Այդ դէպքը հաղորդված է Կ. Պոլսի հայ լրագիրներում և մենք քաղում ենք «Ժամանակ» թերթից։

Մի հայ աղջիկ Խարբերդում 5 տարեկան ժամանակ բռնի կերպով խլամացվում է ծնողների հետ։ Դառնալով 18 տարեկան նա վերջերս գալիս է Կ. Պոլիս և մտնում ծառայութեան մէջ։ Այդտեղ ևս յայտնում է, որ ինքը հայ է և կամենում է մնալ իր նախկին՝ հայ-լուսաւորչական դաւանութեան մէջ, քանի որ այժմ խղճի և հաւատի ազատութիւն է հրատարակված։ Միջամտում է հայոց պատրիարքարանը և խնդրում յանձնել իրան աղջկան. բայց տեսէք ինչ պատասխան է տալիս կրօնների տեսուչը. «Այս խնդիրը իմ իրաւասութիւնից վեր է և մինիստրների խորհրդին է պատկանում այս մասին վճիռ տալ և լուծել նրա կրօնափոխութեան խնդիրը, որովհետև, ըստ շարիաթի, կրօնափոխ եղած իսլամը պէտք է մեռնի»։

Եւ իրօք, շարիաթի համաձայն, եթէ մի իսլամ տղամարդ կամ իսլամ կին ուրանայ իսլամութիւնը, նրա միակ պատիժը—մահն է։

Եւ ուրեմն, իրան սահմանադրական հռչակող Թիւրքիան և շարունակ ամբիոններից, մամուլի մէջ քարոզող կառավարութիւնը, թէ խղճի ազատութիւն և հաւասարութիւն է տիրում Թիւրքիայում, իրականութեան մէջ դարձեալ պարտադիր է համարում շարիաթը և նրա օրէնքները։

Ուրեմն սահմանադրական Թիւրքիայում շարիաթի օրէնքը դեռ չէ ջնջված։

Այդպիսի պայմաններում շատ փառաւոր կը լինէր, եթէ եւրոպական պետութիւնները համակերպվէին Թիւրքական կառավարութեան պահանջին և ջնջէին կապիտիւլասիօնները։

Մի ուրիշ ապացոյց, որ Թիւրքայ կառավարութիւնը միայն թղթի վրա է ամեն տեսակ ազատութիւն և հաւասարութիւն քարոզում. դա յունաց պատրիարքարանի ազգային ժողովի գումարման արգելումն է։

Խնդիրն այստեղ յոյների պահանջի իրաւացիութեան կամ անիրաւացիութեան մասին չէ։ Գուցէ և յոյները անարդար են, բայց խնդիրը այստեղ սկզբունքային է։ Թիւրքայ կառավարութիւնը պնդում է, որ յոյներն իրաւունք չունեն ազգային ժողով գումարել, այսինքն ժխտում է մի իրաւունք, որ չէր ժխտում նոյնիսկ բռնակալ Աբդիւլ-Համիդը։

Երիտասարդ-Թիւրքերի կառավարութիւնը կամենում է հետևել նոյն քաղաքականութեան, որին հետևում էր և նախկին, բռնակալական ըէժիմը, միայն սահմանադրութեան և պարլամենտարիզմի դիմակի տակ։ Եւ մարդ ակամայից ստիպվում է ենթադրել, թէ սահմանադրութիւն, պարլամենտարիզմ ասելով, նա միայն կամենում է շլացնել, խաբել Եւրոպան, որպէսզի ազատվի նրա խնամակալութիւնից և հսկողութիւնից։

Նա հագել է սահմանադրութեան և պարլամենտարիզմի քղամիտը, բայց ներսից մնում է նոյն անողոքամիտ, նոյն ֆանատիկոս, նոյն շովինիստ կառավարութիւնը, այս անգամ դեռ պճնազարդված օսմանցիութեան սին և ցնորամիտ յոյսերով։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 17 սեպտեմբերի

Ժողովրդական լուսաւորութեան մինիստր Շվարցը վերադարձաւ արձակուրդից և ստանձնեց իր պաշտօնը։

Զինուորական մինիստրութեան ժամանակաւոր կառավարչի ամենատպատակ զեկուցագրի վրա՝ Կուբանի շրջանի կօզակների յայտնած ամենատպատակ զգացմունքների մասին, Թագաւոր կայսրը սեփական ձեռքով մակագրեց.

«Շնորհակալ եմ Կուբանի զօրից եւ յոյս ունեմ, որ բացվող ցուցահանդեսը կը ծառայի յօգուտ կօզակների տնտեսական զարգացման»։ (Հ. Գ.)

Թէհրան, 17 սեպտեմբերի

Շահի, թագաւորի և դիպլոմատիական մարմնի ներկայութեամբ տեղի ունեցաւ պետական խնամակալի մարմնի յուղարկաւորութիւնը և թաղումը Շահ-Աբդիւլ-Ազիմի մզկիթում։

Թիւրքայ կառավարութիւնը Պարսկաստանին հետևեալ ուլտիմատումը արեց. եթէ մի ամսվայ ընթացքում բաւարարութիւն չը տրվի Թիւրքահպատակների բազմաթիւ գանգատներին, այն ժամանակ Բ. Դուռը ձեռք կառնէ բեպրէսալիաներ պարսկահպատակների վերաբերութեամբ, որոնց թիւը Թիւրքիայում համնում է 300 հազարի։ (Հ. Գ.)

Բերլին, 17 սեպտեմբերի

Մօաբիտում մինչև երեկոյեան ժամը 9-ը հանգիստ էր. եղան միայն մի երկու անկանոն միջադէպեր։

Հազարաւոր հետաքրքրվողներ լցվում են փողոցները, չը նայած ոստիկանութեան վճռական գործելակերպին։ Երեկոյեան ժամը 9-ից յետոյ Մօաբիտում տեղի ունեցան մի քանի ընդհարումներ։ Տուրն-շարասէում նետվեց մի ծաղկաման. ոստիկանները կրակեցին ատրճանակներից, բայց ոչ ոքի վնաս չը տուին։ Մաքրելով փողոցը, ոստիկանները վիրաւորեցին մի քանի հոգու։ Մի քանի մարդ էլ վիրաւորվեցին և ձերբակալվեցին Էրազմուսշարասէում։ (Հ. Գ.)

Բարսելոնի, 17 սեպտեմբերի

Իտալական թագաւորական զոյգը նախաճաշ առաւեց ի պատիւ կոմս Էրենտալի. թագաւորը չափազանց սրտագին խօսակցեց Էրենտալի հետ, որ յանձնեց նրան Ֆրանց-Յովսէփ կայսրի նամակը, որի մէջ կայսրը շնորհակալութիւն է յայտնում իր ծննդեան 80-ամեակը շնորհաւորելու համար։ Էրենտալին թագաւորը շնորհեց Անունցիատի շքանշանը։ (Հ. Գ.)

Տուրին, 17 սեպտեմբերի

Եկաւ Էրենտալը և ընդունվեց Սանջուլիանօյից։ (Հ. Գ.)

Հէլսինգֆորս, 17 սեպտեմբերի

Մաքսատան վարչութիւնը երկրորդ անգամ առաջադրութիւն արեց սենատին զէնք մուծելու հարցի առիթով, մատնանշելով թէ ցանկալի է հարց բարձրացնել յատենայն դէպս որսորդական հրացաններ և նրանց պարագաները երկիր ներմուծելու թոյլատրութեան մասին։ (Հ. Գ.)

Պէկին, 17 սեպտեմբերի

Չինական ազգային մամուլը համակրանքով է խօսում է ամերիկացի ձեռնարկողների՝ Չինաստանի կարևոր առևտրա-արդիւնաբերական կէտերն այցելելու մասին և խորհուրդ է տալիս սերտ տնտեսական ու կուլտուրական մերձեցում առաջ բերել երկու ժողովուրդների միջև՝ իբրև հիմք քաղաքական միութեան համար։

Պեռական խնամակալը սահմանադրական պալատի պրեզիդիումի միջնորդութեան համաձայն համաձայնութիւն յայտնեց ներկայ գտնվել բացման հանդիսին։

Պալատին կառավարութիւնը ներկայացրել է պետական բիւջէն, մանչուրացիների կենցաղի կազմակերպութեան, Մոնղոլիայում համապետական իշխանութիւն մտցնելու, պարբերական մամուլի, դատական մասին վերաբերող օրինագծեր։ (Հ. Գ.)

Մուկդէն, 17 սեպտեմբերի

Չինական իշխանութիւնները Տաոֆում ձերբակալեցին 13 եապօնացիների, որոնք չէին ուզում քաղաքից հեռանալ։ Եապօնական գեներալ-հիւպատոսը բողոքեց ձերբակալվածներին ծեծելու և նրանց հետ կոպիտ կերպով վարվելու դէմ։ Պէկինից յատուկ պաշտօնեայ ուղարկվեց քննութեան համար։ (Հ. Գ.)

—

Միւնիխէն, 17 սեպտեմբերի
Երեկոյեան Իզվոլսկին ընտանիքով մեկնեց Ֆրանկֆուրտ։ (Հ. Գ.)

—

Բ ե ռ լ ի ն։— Գաղթական մոլոկանների և հնազանդների միջև յաճախակի տեղի են ունենում թիւրիմացութիւններ հողի պատճառով։ Գաղթականական վարչութեան գործակալի ներկայացուցիչը շատ քիչ է ազդում նրանց վրա։

Թշնամական յարաբերութիւնները օրէ-ցօր աճում են։ Սուր կերպարանք ստացան նրանք այժմ ինչ-որ հողաբաժնի առիթով։ Ժամանակն անցնում է, սակայն ոչ մոլոկանները և ոչ հնազանդները չեն վտահանում ցանքս անել։

Վիճող կողմերը բողոքով դիմեցին Թիֆլիս։

Պարսկական սահմանագլխին այնքան էլ հանգիստ չէ։ Այնտեղ մի շարք պարտիզանական կռիւներ են շահսէվանների և նոր ըժիմի կողմակիցների միջև։ Հէնց այս օրերս ստացած տեղեկութիւնների համաձայն, շահսէվանների մի խումբ կամեցել է մտնել Արդաբիլ։ Նրանց արգելք է եղել ռուսաց զօրամասը։

Սահմանապահ զօրախումբը արթուն կերպով պաշտպանում է սահմանը, որով անցնում են երբեմնակի վանդան փոքրիկ խմբեր։ («Յ.»)

—

Պ ե տ ե ր բ ո ւ ր գ.—Լուր է պատում, որ կառավարութիւնը նոր 4%-ային արտաքին փոխառութիւն է կնքելու Պարիզում։ Ֆինանսների մինիստր Կոկովցէվը, ինչպէս խօսում են, այդ նպատակով գնալու է Պարիզ։ Փող տուող բանկերի գլուխ կանգնած է «Լիոնի կրէդիտը»։

Լուրերի համաձայն, այս օրերս Բարձրագոյն հրամանով կարձակվի ֆինլանդական սէյմը, որովհետև նա մերժեց քննել կառավարութեան առաջարկութիւնը համապետական օրէնսդրութեան կարգի մասին։ Ասում են, որ սէյմը այլևս չի գումարվի։

Անհետացաւ ռուս ժողովրդի միութեան գլխաւոր խորհրդի գանձապահը կարևոր փաստաթղթերով։ («Ե.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Բ. ԴՕԼՈՒԽԱՆԵԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

—

Այսօր Բագուում հողին են յանձնում Բ. Դօլուխանեանի մարմինը։

Տեղական հայ հասարակութեան ներկայացուցիչները որոշել են՝ հանգուցեալի յիշատակը յաւերժացնելու համար՝ 1) յաջողացնել միջնորդութիւն՝ թոյլ տալ թաղել նրան նոր կառուցվող հայոց եկեղեցու բակում։ 2) յաւերժացնել նրա յիշատակը հիմնելով որևէ մի հանրօգուտ հաստատութիւն և այդ նպատակով կազմակերպել կամաւոր նուէրների հաւաքումն՝ հարկաւոր փոնդը կազմելու համար։

Անկասկած, Բագուի հայ հասարակութեան պատիւ է բերում նրա նախանձախնդրութիւնը՝ յաւերժացնել մի գործչի յիշատակը, որ խոշոր դեր է կատարել ազգային-հասարակական գործերի ասպարէզում։ Այդ առիթով մենք կը կամենայինք և մեր կարծիքը յայտնել, թէ ինչ կերպ կարելի է յաւերժացնել հանգուցեալի յիշատակը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԸ՝ ԲՐԻՒՍՍԷԼԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍՈՒՄ

—

Բրիւսսէլի համաշխարհային ցուցահանդէսի մասին խօսելիս, մենք յայտնել էինք, որ Պարսկաստանը պատւաւոր կերպով է ներկայացրած միջազգային այդ մրցման ասպարէզում, և խոստացանք աւելի մանրամասն տեղեկութիւններ հաղորդել պարսկական պաւիլիոնի մասին («Մշակ» № 186)։

Պարսկական բաժանմունքի պատւաւոր նախագահն է Բրիւսսէլի պարսից դեսպան Մահմուդ խան, տիտղոսեալ Մօֆեխեմ-Սուլթանեի. ընդհանուր կոմիսարն է՝ Բրիւսսէլի պարսից ընդհանուր հիւպատոս Էդուարդ Գոլցիհէր, իսկ կոմիտէտի անդամներն են բէլգիայի մի քանի ականաւոր պետական գործիչներ, վաճառականներ և հայազգի Տիգրան խան Գօրոյեանց, որ միևնոյն ժամանակ և մրցանակներ բաշխող ժիւրիի անդամն է և պարսկական բաժնի փոխ-նախագահ։

Պարսկական բաժինը 1100 քառակուսի մետր տարածութիւն ունի. մինչև այսօր ոչ մի համաշխարհային ցուցահանդէսի մէջ այդքան մեծ տարածութիւն չէ յատկացված եղել Պարսկաստանին։ Պարսկաստանը ի ցոյց է դրել. 1) Ցկարներ, 2) փոռագրութիւն եւ վիմագրութիւն, 3) հարտարապետութիւն (Քսէրքսէսի պալատի դարպասը, Պէրսէպոլիսում, իբրև տիպ հին ճարտարապետութեան. «Թալար» կոչված պատուոյ սրահը), 4) ձեռագիրներ, 5) լուսանկարներ, 6) դրամներ, 7) երկրագործութիւն (սննդարար հողային բերքեր, մեղր, հացահատիկներ և սերմեր), 8) ուտելիք եւ ըմպելիք (ալիւրեղէն, կարկանդակներ, շաքարեղէն, գինի՝ Շիրազի, Թաւրիզի և այլն, օշարակներ), 9) հանքային արտադրութիւններ, 10) գորգեղէն եւ կերպասներ (բրդէ, մետաքսէ թանգագին գորգեր, շալեր, մետաքսեղէն, բրդէ, բամբակէ կերպասներ), 11) կաշուեղէն եւ մորթեղէն, 12) անուշահոտ ջուր, 13) ծխախոտ, 14) ոսկերչութիւն, 15) ակնեղէն եւ 16) հալուածոյ մեծաղներ։

Ինչպէս յայտնի է, վերջեր Բ. Դօլուխանեան գլուխ էր կանգնել մի գեղեցիկ և մեծ գործի՝ իրագործել էջմիածնին պատկանող ահագին անջրդի հողերի ոռոգումը։ Ծրագիրը արդէն կազմված է, հարկաւոր գումարն էլ, որքան մեզ յայտնի է, հանգուցեալը հաւաքել է և այս աշնան գործը պէտք է անպատճառ իրականանար, եթէ Բ. Դօլուխանեան, որ այդ գործի հոգին էր, չը վախճանվէր։ Այդ ծրագրի իրագործմամբ էջմիածնի, հետևաբար և նրա հետ կապված մի քանի ազգային-կրթական հաստատութիւնների տնտեսական վիճակը զգալի կերպով պէտք է բարւոքվի և գուցէ հայրապետական աթոռը այլևս կարիք չունենայ ազգի օգնութեան դիմելու։

Եւ ահա բագուցիների առաջ մի առիթ՝ յաւերժացնելու Բ. Դօլուխանեանի յիշատակը, եթէ նրանք թոյլ չը տան, որ նրա սկսած գործը մնայ անկատար։ Մենք հաւատացած ենք, որ Դօլուխանեանի մօտ բարեկամները և յիշատակը յարգողները կը կատարեն նրա ցանկութիւնը և փափագը, որ էր՝ ազատել էջմիածնի վանքը իր տնորոշ, տարտամ և երերուն ֆինանսական և տնտեսական դրութիւնից։ Հ. Ա.

ՄԻ ԱՌԱՋԱՐԿ

—

Վերջին տարիները մի լաւ սովորութիւն է մտել մեր մէջ. այդ՝ մեր հասարակական-գրական ասպարիզում ներկայումս գործող անհատներին ցոյց տրված բարոյական վարձատրութիւնն է յօբելեանական հանդէսներով և փոքր ի շատէ նաև նիւթականով։

Այս հանդէսները գալիս են ապացուցելու, որ մենք թէև չենք գտնվում բարձր կուլտուրա ունեցող ազգերի շարքում, սակայն աշխատում ենք նմանվել նրանց կամ մենք էլ հետևում ենք կուլտուրային, ուրիշ խօսքով՝ առաջադիմում ենք։

Մի ազգ, որ կարողանում է քննադատութեան ենթարկել իր գործիչներին նրանց կենդանութեան օրօք և տալ արժանի վարձատրութիւն, ապա այդպիսի ազգը աւելի ևս պարտաւոր է երախտահատոյց լինել իր անցեալ գործիչների վերաբերմամբ, որոնք իրանց անխոնջ աշխատանքով կրթել են իրանց յաջորդող սերնդին և դեռ կրթում են իրանց պատրաստած աշակերտների, ներկայումս գործող գործիչների, միջոցով։

Մեր անցեալ գործիչների մէջ իր առանձնայատուկ տեղն ունի ուսուցիչ-հրապարակախօս-խմբագիր Ստեփանոս Նազարեանը, որի ծննդեան 100-ամեակը լրացաւ կամ լրանում է ներկայ 1910 թ.ին։ Ստ. Նազարեանը ծնվել է 1810 թ. Թիֆլիսում։ Ես երկար կանգ չեմ առնի Նազարեանի կենսագրութեան վրա, որովհետև, հաւատացած եմ, իւրաքանչիւր կրթված հայ անհատ շատ քաջ ծանօթ է նրա անցեալի հետ. սակայն այս երկտողովս նպատակ ունեմ առաջարկելու մեր ինտելիգենցիային՝ յաւերժացնել Նազարեանի յիշատակը մի որևէ ձեռնարկութեամբ։

Սակայն իմ առաջարկը սրանով չէ վերջանում. մենք Ստ. Նազարեանի հետ թեթեւ տուած ունեցել ենք նաև ուրիշ գործիչներ, որոնք «Հիւսիսափայլ» ամսագրի շուրջը խմբված՝ իրանց մեծ եղբօր հետ ա-

Այդ խմբերից բացի, որոնց ամեն մինը որոշ տեղ է գրաւում, Տիգրան խան Գօրոյեանցի ծրագրով և զարդարանքով շինված է պարսկական պատուասրահը (salon d'honneur) կամ թալար, ապակեզարդ և գմբեթաձև, որ ներկայացնում է ժամանակակից պարսկական ճարտարապետութեան մինիմուշ, կոչված «բիւրեղեան» և զարդարված է թանգագին գորգերով։

Մի խօսքով, ժանեալով «Արեգակի և Առիւծի» պաւիլիոնը, դուք տեսնում էք Պարսկաստանի հին և նոր գեղարուեստի ընտիր ձեռագործներ, հանքային, բուսաբանական բազմաթիւ օրինակներ, թանգագին, շքեղ գորգեր, կտաւի, սնդուսի դիպակներ, բրդի և բամբակի ամեն տեսակ գործուածքներ և ասեղնագործներ, հին դրամների ժողովածու, հին ու նոր նկարներ, յախճապակիներ, անօթներ, երկաթէ, պղնձէ, ոսկեպատ առարկաների, զրահների ժողովածուներ, արծաթէ բանված և քանդակված անօթներ, սպառներ, գոհարեղէն, պատկերազարդ ձեռագիրներ, որոնց մէջ Սամի, Հաֆիզի, Սադիի, Ֆրդօվսիի հին ձեռագիրները, Շիրազի, Սպահանի, Թաւրիզի ընտիր գինիներ և այլն և այլն։

Ուրախութեամբ նկատեցի, որ մրցանակի արժանացած հաստատութիւնների մէջ գրանվում է և Թաւրիզի Հայուհեաց Միացեալ Բարեգործական Ընկերութիւնը, որ իր դպրոցական ձեռագործ արտադրութիւնների համար վարձատրվել է ոսկէ մէդալով։

Պարսկական բաժնի վարչութիւնը, որին գլուխ է կանգնած համակրելի և լուսաւոր գաղափարների տէր դեսպան Մահմուդ խանը, հրատարակել է մի շքեղ կատալօգ, որի մէջ, ի թիւս այլոց, տրված են և հաժառօտ շահեկան տեղեկութիւններ Պարսկաստանի մասին։ Անօգուտ չենք համարում առաջ բերել այստեղ այդ տեղեկութիւնները։

Աշխարհագրական դիրք. — Եզրաւորված հիւսիսից Կասպից ծովով և Կովկասի ու Անդրկովկասեան ռուսական նահանգներով, արևելքից՝ Աֆղանիստանով և Բելուջիստանով, հարաւից՝ Ուրանի (Հնդկական ովկիանոս) ծովով և Պարսից ծոցով, արևմուտքից՝ Պարսից ծոցով և Ասիական Թիւրքիայով, Պարսկաստանը բռնում է Իրանի պլատօյի (սարահարթի) ամբողջ արևմտեան կէսը։

Ֆիզիկական աշխարհագրութիւնը.—Պարսկաստանը, որի եռանկիւնի մեծ հողը սահմանաւորված է ամեն կողմից լեռնաշղթաներով, որոնք հասնում են 4000-ից մինչև 6000 մետր բարձրութեան, ծածկում է մօտ 1.650,000 քառակուսի կիլոմէտր մի տարածութիւն, այսինքն մի տարածութիւն, որ աւելի է քան Ֆրանսիան, Գերմանիան, Բէլգիան և Սպանիան միատեղ առած։

Ազգաբնակութիւնը. — Պարսկաստանի ազգաբնակութիւնը մինչև այսօր հաշուել են 10 միլիոն բնակիչ, բայց նոր ժողովրդագրութիւնը, որ այժմ կատարվում է, կը հասցնի անտարակոյս այդ թիւը մինչև 15 միլիոնի։

Կարեւոր քաղաքները.—Պարսկաստանի նշանաւոր քաղաքներն են. Թէհրան՝ պետութեան մայրաքաղաքը, Թաւրիզ, Բաշտ, Բիրմանշահ, Շիրազ, Բիրման, Մէշէդ։

Լեզուներ.—Պարսկերէնը (Ֆարսի) խօսվում է բացառապէս Պարսկաստանի մեծ մասի մէջ և հասկացվում է ամեն տեղ։ Ադրբէյջանի Թուրքերէնը շատ տարածված է երկրի հիւսիս-արևմտեան մասում։ Աբարբայջանում և Պարսից ծոցի նաւահանգիստներում խօսում են արաբական մի բարբառ։

Հայերն ունեն իրանց սեփական լեզուն, բայց ամենքն էլ խօսում են պարսկերէն և իրանց շրջապատող մուսուլման ժողովուրդների բարբառները։ Իրբև եւրոպական լեզու տարածված է ֆրանսերէնը. ապա գալիս է ռուսերէնը (հիւսիսում) և անգլիերէնը (հարաւում), մանաւանդ նաւահանգիստներում։

Կրօն.—Պարսիկների ահագին մեծամասնութիւնը պատկանում է մուսուլմանական շիա (Ջաֆարի) հերձուածողական աղանդին։

Երկրագործութիւն.—Պարսկաստանի կլիմաների բազմազանութեան պատճառով նրա հողը ընդունակ է բազմազան մշակումների։ Սակայն սարահարթի վրա ամենից տիրապետող մշակումը ցորենն է։ Ամեն մի գիւղում մշակված հողերի $^3/_5$-ականը՝ ցորենին է պատկանում։ Բացի դրանից բուսնում է դարի, գետնախնձոր, ճակնդեղ, սեխ, ձմերուկ, եգիպտացորեն, բրինձ, շաքարեղեգն, բամբակ, ծխախոտ, օպիում և այլն։

Առդիւնաբերութիւն.—Արդիւնաբերութիւնների գլխաւորը՝ բրդէ գործերի արդիւնաբերութիւնն է (նուրբ տեսակի գործերը գործվում են Քիրմանում, Բէշանում, Թաւրիզում, Բիւրդստանում և Խօրասանում. հասարակ տեսակները՝ Սուլթանաբադում, Շիրազում և Համադանում) և բամբակէ գործերի (գլխաւորապէս Եզդում)։ Մետաքսէ գործերը գործվում են Թաւրիզ, Բէշան, Սպահան, Քիրման և Մէշէդ քաղաքներում։

Շերամաբուծութիւնը կամ մետաքսագործութիւնը, ըստ կարգի կարևորութեան, երկրորդ տեղն է բռնում։ Նա շատ ծաղկած է Գիլանում (Բաշտ), Մազանդարանում (Բարֆրուշ). մի քանի տարիներից ի վեր այդտեղ շատ խնամված կերպանոր են հիւսում։ Միւս կարևոր արդիւնաբերութիւններն են՝ «քաշիմիր» կոչված շալերը (Քիրման և Եզդ), օպիումի պատրաստութիւնը (Սպահան, Շիրազ, Աբաջ, Եզդ, Քիրման, Սուլթանաբադ, Բուրուջիրդ և Խօրասան) և հինայի պատրաստութիւնը (Բաժի և Եզդի շրջաններում), կաշուեղէն և այլն։

Մարգարիտների որսումը մեծ չափով կատարվում է Պարսից ծոցում։

Հանքային արդիւնաբերութիւնը այժմ վերածված է միայն ֆիրուզաների շահագործմամբ Նիշաբուրի շրջաններում և Թէհրանից մի քիչ հեռու մի տեղ գտնվող քարածուխի ստացմամբ։ Ի հարկէ, Պարսկաստանում ևս գոյութիւն ունեն բոլոր այն մանր արդիւնաբերութիւնները, որոնք կան բոլոր երկիրներում—ապակեղէն, խեցեղէն, փայտեղէն, պղնձեղէն և այլն։

Վաճառականութիւն.—Արտահանման առևտուրը բաղկացած է ազգային արդիւնաբերութիւններից (գորդ, շալ, օպիում, մետաքս և այլն), երկրագործութեան բերքերից (բամբակ, բրինձ, ընդեղէն, չոր պտղեղէն, ծխախոտ և այլն) և անասնաբուծութեան արտադրանքները և խոտատեղերը զանազան մարդկանց քմահաճոյքից, լինեն նրանք հոտաղներ թէ սայլապաններ, չօբաններ թէ այլ անձնաւորութիւններ։ Որսորդ

—

Շ ու շ ի, 13 սեպտեմբերի

Շուշու թեմական և Մարիամեան օրիորդաց դպրոցների ուսուցչական խմբերը արդէն կազմված են։ Այն մեծագոյն կարգադրութիւնը, որով հոգաբարձութիւնը մի քանի տողով արձակեց ուսուցչական խումբը, այն արդիւնքը չը տուեց, ինչ որ իրօք սպասելի էր։ Հոգաբարձութիւնը, յայտնի է ամենքին, արձակեց այդ երկու դպրոցների ուսուցչական խմբերին, երևի այն նպատակով, որ նրանց տեղ հրաւիրէր պիտանի, աշխատասէր և բարեխիղճ ուսուցիչներ, բայց այսօր իրականութիւնը այլ բան է ցոյց տալիս։ Ուսուցչական խմբերի մեծ մասը կազմում են հին խմբի ուսուցիչները, նրանք՝ որոնք խնդիր են տուել նորից դպրոց մտնելու. իսկ նրանք են դուրս մնացել, որոնք իրանց պաշտպանողներ են համարել նորից այդ դպրոցը մտնել ներկայ հոգաբարձական կազմի օրէրով և ոչ մի խնդիր չեն տուել, թէև, ինչպէս ասում են, հոգաբարձուները փափագ են ունեցել նրանց էլ ընդունելու և այդ ուսուցիչները աչքի ընկնող և յարգանք վայելողներն են։ Որ հոգաբարձութիւնը այդ կարգադրութիւնն անելով, այսինքն արձակելով ամբողջ ուսուցչական խումբը, աչքի առաջ չէ ունեցել դպրոցների բարգաւաճումը, առաջադիմութիւնը, այլ անձնական վրիժառութիւնը, այս արդէն հայելու նման պարզ է։ Ի՞նչ գործ ունի անձնական հաշիւը դպրոցական գործերում՝ մնում է անհասկանալի և աւելի քան զզվեցնում է հասարակութեանը։

Օգոստոսի 29-ի պատգամաւորական ընտրութիւններում, որի արդիւնքը հրատարակվեց «Մշակ» լրագրում, բոլոր եկեղեցիներում, չը նայելով որ ներկայ հոգաբարձական կազմի անդամները դրել էին իրանց թեկնածութիւնները, ամենքն էլ ամեն տեղ չարաչար սեսացան։ *

—

Հ ի ն-Ն ա խ ի ջ ե ւ ա ն, 14 սեպտեմբերի

Տեղս ծխ. երկսեռ դպրոցի ուսուցչական կազմը բաղկացած է հներից և նորերից։ Նրա մէջ կան շատ անփորձներ, որոնք մի կերպ ցէնդ են ձեռք բերել, և այդպիսիների ընտրութիւնը խաթրի համար է եղել։ Այսպէս թէ այնպէս երկսեռ դպրոցը, գլխաւորապէս, ապահովված է ս. Գէորգ եկեղեցու շրջապատ խանութների արդիւնքով։ Միայն ցանկալի կը լինէր, որ հոգաբարձութիւնը և ուսուցչ. խումբը չանք գործ դնեն տարվայ վերջին։ որևիցէ արդիւնք ցոյց տալու։

Ընդհանուր առմամբ մեր քաղաքի և նրա շրջապատ գիւղերի ցորենի և գարու բերքը շատ պակաս է, իսկ խաղողինը շատ միջակ։ Անցեալ տարի բամբակի գինը բարձր լինելու պատճառով այս տարի թէ գիւղերում և թէ քաղաքներում բամբակ չափից շատ էին ցանել։ Դժբաղդաբար ցանողների մեծ մասը վնաս է կրում, որովհետև ջուրը Նախիջևանի գետում շատ պակաս էր և բամբակները այրվեցին, եղած ջրով էլ օգտվեցին կուլակները։ Մեր քաղաքի աւագ Ակպէր-խան Նախիջևանսկին մեծ քանակութեամբ բամբակ է ցանել։ Նրա ջրի հերթի ժամանակ յուլիս ամսի վերջերին թէ բաղդի բերմամբ կամ թէ արհեստական կերպով Ղանի գեօլ կոչված լիճը քանդվեց, որի վրա էր ժողովրդի յոյսը։ 24 ժամ աւելի քան եօթն ջրաղաց բանեցնելու ջուր եկաւ Նախիջևան գետով քաղաքիս վրա և այդ ջրով միմիայն Ակպէր-խանը օգտվեց, փոքր ինչ բացառութիւնով։

Ասում են, և շատ հաւանական է, որ յիշեալ պարոնը բամբակից զուտ արդիւնք կունենայ աւել քան 10,000 ր., եթէ բամբակի պուդը 15 ր. ծախվի։

Քաղաքումս հայերի մէջ մեռելութիւն է տիրում. կարծես մարդու թանգութիւն է. կար մի ուրախալի բան, այդ Կովկասի Հ. Բարեգործ. Ընկ. ճիւղն էր, այն էլ վաղուց արդէն փակված է։

Բնիկ-Նախիջևանցի

—

Ա լ է ք ս ա ն դ ր ո պ օ լ, 16 սեպտ.

Ամսիս 15-ին կայացաւ դուժայի ձայնաւորների նիստը։ Այդ նիստին պէտք է կայանար նոր քաղաքագլխի ընտրութիւն՝ հրաժարված Յ. Տիգրանեանի փոխարէն։

Քաղաքագլխութեան թեկնածու առաջարկվեց Կ. Կամսարականը, որը համաձայնվել էր իր տուփը դնել այդ պաշտօնի համար։ Գաղտնի քուէարկութեամբ Կ. Կամսարականն ստացաւ 22 սպ. ու 2 սև և ընտրվեց Ալէքսանդրոպոլի քաղաքագլուխ։

Կ. Կամսարականը ընիկ նուխեցի է։ 1892-ին եղել է հարկային վերատեսուչ Երևանում, իսկ 1905-ից մինչև այսօր նոյն քաղաքում վարում է արքունական պալատի կառավարչի պաշտօնը։

Նորին Վեհափառութիւնը չէր բարեհաճել Երուանդ Տէր-Մինասեանին հաստատել Արդութեան օրիորդաց դպրոցի տեսչութեան պաշտօնում։ Նոր տեսուչ հրաւիրված է Շուշու թեմ. դպրոցի նախկին տեսուչ Աւ. Տէր-Պողոսեանը։ Մ. Տարախչեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Վերադարձաւ Թիֆլիսի նահանգի կրթական հաստատութիւնները քննելուց յետոյ և ստանձնել իր պարտականութիւնները կով. ուսումն. շրջանի հոգաբարձու Ռոզոլիը։

◆ Կովկասեան գլխաւոր իշխանութիւնը թոյլ տուեց հայ-կաթոլիկների հովիւ Գրիգոր վարդ. Սաֆարեանին հանգանակութիւն բանալ Կովկասի սահմաններում հայ-կաթոլիկների մէջ հինգ տարի ժամանակով Թիֆլիսում սեփական հայ-կաթոլիկական եկեղեցի կառուցանելու համար այն պայմանով, որ ժողովված գումարները պահվին Փոխարքայի դիւանատանը և յիշեալ հանգանակութեան վրա հսկէ միևնոյն դիւանատունը։

◆ Մեզ հաղորդում են, որ Գրիգոր Զալխուշեանի հասարակական և գրական գործունէութեան յօբելեանը, որի մասին գրեցինք «Մշակում», որոշված է տօնել հոկտեմբերի 10-ին Նոր-Նախիջևանում։

◆ Կենտրօնական իշխանութիւնը սկզբունքով որոշել է Կովկասում հաստատել կենդանաբանական ալպիական կայան։ Այդ հարցի ուսումնասիրութեան համար Թիֆլիս է գալիս երկրագործութեան վարչութեան պաշտօնեայ Բիրմէրը։

բերքերից (բուրդ և անմշակ կաշի)։

Պարսկաստանի առևտրական շարժումը յարատև առաջադիմութիւն է գործում։

Այսպէս՝ օրինակ՝ 1901—1902 թ. պարսկական վաճառականութեան ամբողջական թըւանշանը ներածութեան և արտահանութեան գլխաւոր երկիրների հետ հասնում էր 449.174,973 ղրան կլորիկ գումարի և բաժանվում էր այսպէս.

Ներածութիւն	. .	298.577,216 ղրան
Արտահանութիւն	.	150.597,757 »
Առաջինը 66,47 առ հարիւրը		
Երկրորդը 33,53 » »		

Իսկ 1908—1909 թ. վաճառականութիւնը 698.691,072 ղրան գումարի շարժումն է ցոյց տալիս. այն է՝

Ներածութիւն	. .	372.484,073 ղ.=53%
Արտահանութիւն		326.206,999 ղ.=47%

Տրանից տեսնվում է, որ 1901-ից մինչև 1908 թ. շրջանում ներածութիւնների հաւասարական բաժինը նուազել է նշանաւոր կերպով ի նպաստ արտահանութեան։

Այդ առևտրական շարժման մասնակցում են.

Ռուսաստանը	. . . . .	408.634,517 ղրան
Բրիտանական կայսր.	.	182.823,527 »
Թիւրքիան	. . . .	49.188,184 »
Միւս երկիրները միատեղ		58.044,844 »

Արտահանման գլխաւոր առարկաներն են կլոր թւանշաններով.

Բամբ. և մետաքսէ գորգեր		43.600,000 ղրան
Հում բամբակ	. . .	42.377,000 »
Բրինձ	. . . . .	28.754,000 »
Ջամիչ	. . . . .	23.026,000 »
Թարմ և աղած ձուկն	.	19.289,000 »
Օպիում	. . . . .	14.400,000 »
Նուշ, պիստակ	. . .	11.255,000 »
Հում բուրդ	. . . .	10.400,000 »
Տեղական խէժեր	. . .	10.300,000 »

Ներածութեան գլխաւոր առարկաները՝

Բամբակէ գործուածքներ		128.700,000 ղրան
Շաքարեղէն և շաքարաւազ		91.800,000 »
Թէյ	. . . . .	21.000,000 »

Ես դիտմամբ առաջ բերի այս տեղեկութիւնները, որովհետև, որքան էլ Պարսկաստանը մեր դրացի երկիրն է, բայց մենք շատ քիչ ծանօթութիւններ ունենք նրա

նոս) ծովով և Պարսից ծոցով, արևմուտքից՝ Պարսից ծոցով և Ասիական Թիւրքիայով, Պարսկաստանը բռնում է Իրանի պլատօյի (սարահարթի) ամբողջ արևմտեան կէսը։

Ֆիզիկական աշխարհագրութիւնը.—Պարսկաստանը, որի եռանկիւնի մեծ հողը սահմանաւորված է ամեն կողմից լեռնաշղթաներով, որոնք հասնում են 4000-ից մինչև 6000 մետր բարձրութեան, ծածկում է մօտ 1.650,000 քառակուսի կիլոմէտր մի տարածութիւն, այսինքն մի տարածութիւն, որ աւելի է քան Ֆրանսիան, Գերմանիան, Բէլգիան և Սպանիան միատեղ առած։

Ազգաբնակութիւնը. — Պարսկաստանի ազգաբնակութիւնը մինչև այսօր հաշուել են 10 միլիոն բնակիչ, բայց նոր ժողովրդագրութիւնը, որ այժմ կատարվում է, կը հասցնի անտարակոյս այդ թիւը մինչև 15 միլիոնի։

Կարեւոր քաղաքները.—Պարսկաստանի նշանաւոր քաղաքներն են. Թէհրան՝ պետութեան մայրաքաղաքը, Թաւրիզ, Բաշտ, Բիրմանշահ, Շիրազ, Բիրման, Մէշէդ։

Լեզուներ.—Պարսկերէնը (Ֆարսի) խօսվում է բացառապէս Պարսկաստանի մեծ մասի մէջ և հասկացվում է ամեն տեղ։ Ադրբէյջանի Թուրքերէնը շատ տարածված է երկրի հիւսիս-արևմտեան մասում։ Աբարբայջանում և Պարսից ծոցի նաւահանգիստներում խօսում են արաբական մի բարբառ։

Հայերն ունեն իրանց սեփական լեզուն, բայց ամենքն էլ խօսում են պարսկերէն և իրանց շրջապատող մուսուլման ժողովուրդների բարբառները։ Իրբև եւրոպական լեզու տարածված է ֆրանսերէնը. ապա գալիս է ռուսերէնը (հիւսիսում) և անգլիերէնը (հարաւում), մանաւանդ նաւահանգիստներում։

Կրօն.—Պարսիկների ահագին մեծամասնութիւնը պատկանում է մուսուլմանական շիա (Ջաֆարի) հերձուածողական աղանդին։

Երկրագործութիւն.—Պարսկաստանի կլիմաների բազմազանութեան պատճառով նրա հողը ընդունակ է բազմազան մշակումների։ Սակայն սարահարթի վրա ամենից տիրապետող մշակումը ցորենն է։ Ամեն մի գիւղում մշակված հողերի $^3/_5$-ականը՝ ցորենին է պատկանում։ Բացի դրանից բուսնում է դարի, գետնախնձոր, ճակնդեղ, սեխ, ձմերուկ, եգիպտացորեն, բրինձ, շաքարեղեգն, բամբակ, ծխախոտ, օպիում և այլն։

Առդիւնաբերութիւն.—Արդիւնաբերութիւնների գլխաւորը՝ բրդէ գործերի արդիւնաբերութիւնն է (նուրբ տեսակի գործերը գործվում են Քիրմանում, Բէշանում, Թաւրիզում, Բիւրդստանում և Խօրասանում. հասարակ տեսակները՝ Սուլթանաբադում, Շիրազում և Համադանում) և բամբակէ գործերի (գլխաւորապէս Եզդում)։ Մետաքսէ գործերը գործվում են Թաւրիզ, Բէշան, Սպահան, Քիրման և Մէշէդ քաղաքներում։

Շերամաբուծութիւնը կամ մետաքսագործութիւնը, ըստ կարգի կարևորութեան, երկրորդ տեղն է բռնում։ Նա շատ ծաղկած է Գիլանում (Բաշտ), Մազանդարանում (Բարֆրուշ). մի քանի տարիներից ի վեր այդտեղ շատ խնամված կերպանոր են հիւսում։ Միւս կարևոր արդիւնաբերութիւններն են՝ «քաշիմիր» կոչված շալերը (Քիրման և Եզդ), օպիումի պատրաստութիւնը (Սպահան, Շիրազ, Աբաջ, Եզդ, Քիրման, Սուլթանաբադ, Բուրուջիրդ և Խօրասան) և հինայի պատրաստութիւնը (Բաժի և Եզդի շրջաններում), կաշուեղէն և այլն։

Մարգարիտների որսումը մեծ չափով կատարվում է Պարսից ծոցում։

Հանքային արդիւնաբերութիւնը այժմ վերածված է միայն ֆիրուզաների շահագործմամբ Նիշաբուրի շրջաններում և Թէհրանից մի քիչ հեռու մի տեղ գտնվող քարածուխի ստացմամբ։ Ի հարկէ, Պարսկաստանում ևս գոյութիւն ունեն բոլոր այն մանր արդիւնաբերութիւնները, որոնք կան բոլոր երկիրներում—ապակեղէն, խեցեղէն, փայտեղէն, պղնձեղէն և այլն։

Վաճառականութիւն.—Արտահանման առևտուրը բաղկացած է ազգային արդիւնաբերութիւններից (գորդ, շալ, օպիում, մետաքս և այլն), երկրագործութեան բերքերից (բամբակ, բրինձ, ընդեղէն, չոր պտղեղէն, ծխախոտ և այլն) և անասնաբուծութեան

◆ Թիֆլիսում կազմակերպվել է մի նոր ակցիոնէրական ընկերութիւն 800,000 ռուբլի դրամագլխով, որի նպատակն է Թիֆլիսը Կոջորի հետ միացնել երկաթուղով. այդ գիծը անցնելու է Սօլոլակի տունելի միջով, բուսաբանական այգու վերին մասերով և ապա դէպի Կոջոր։ Նախնական աշխատանքները արդէն կատարված են։

◆ Առաջիկայ յունվար ամսից կը սկսվեն Թիֆլիսի 1-ին Փոխադարձ Վարկի Ընկերութեան սեփական շինութեան կառուցման աշխատանքները Սօլոլակում, Թայիրեանի տան տեղում, որը շուտով կը քանդեն։ Ինչպէս յայտնի է, նոր շինութեան յատակագիծը յանձնված էր կազմել տեխնիկ Օհանջանեանին, որ և վերջացնելով իր մխսիան՝ նախագիծը ներկայացրեց ընկերութեան խորհրդին։

◆ Թիֆլիսի քաղ. բժ. Դէդալինը այս օրերս հրաւիրվեց 3-րդ Պետրօվսկի նրբափողոցը մի հիւանդի մօտ. սակայն բժիշկը անկարող եղաւ տեսնել հիւանդին այն պատճառով, որ ինչպէս ինքը, այնպէս և ոստիկանները դռնապանների հետ չը գտան յիշեալ փողոցը. ի նկատի ունենալով այդ հանգամանքը, սանիտարական-բժշկական տեսուչ բժ. Կար. Ստեփանեան առաջադրութիւն է արել քաղաքային վարչութեան, որպէսզի բժիշկները կարողանան շուտով օգնութեան հասնել հիւանդներին, քաղաքային դումայական իւրաքանչիւր բժշկի հայթայթվի քաղաքի յատակագիծը (պլանը)։

◆ Թիֆլիսի քաղ. ինժեները վարչութեան առաջարկութեամբ կազմում է Ծալկայից ջուր բերելու նախահաշիւը, ղեկավարվելով ինժեներ Լինդլէյի կազմած նախագծով։

◆ Թիֆլիսի քաղ. վարչութիւնը դարձեալ առաջարկութիւններ է ստանում մասնաւոր անձերից՝ քաղաքային էլեքտրական կայարան հիմնելու հարցի մասին։ Ինչպէս յայտնի է, կայարանի կառուցման առաջարկութիւններ ստացվել են արտասահմանեան ֆիրմաների կողմից, որոնց և տրամադրէ է յանձնել քաղաքային վարչութիւնը։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը երկրորդեց իր խնդիրը նահանգապետի առաջ, որ կարգադրվի դադարեցնել Տրուցցիի փայտաշէն ցիրկի աշխատանքները Փօլօվինակի պրօսպէկտի վրա։

◆ Այսօր, կիրակի, առաւօտեան ժամը 10-ին, «Մշակի» խմբագրութեան մէջ կայանալու է ժողովրդական համալսարանի հայկական սեկցիայի նիստը։ Անդամները հրաւիրվում են ներկայ լինել։

◆ Այսօր, կիրակի, ժամը 11½-ին, Բիրժայի դահլիճում կայանալու է ֆրանս. Alliance française ընկերութեան ընդհանուր ժողովը։ Խնդրվում է անդամներից ներկայ լինել։ Պիտի տեղի ունենան ընտրութիւններ և վճռվեն մի քանի կարևոր հարցեր։

◆ 1905 թ-ից մինչև օրս քաղաքի վրա պարտք է կուտակվել Թիֆլիսի ոստիկանութեան պահպանութեան համար 500 հազար ռուբլի, և տուգանք այդ դրամի համար 71,950 ռ.։ Այս ամբողջ գումարը քաղաքային վարչութիւնը պարտաւոր է մուցցնել պետական գանձատունը։

◆ Թիֆլիսի նահանգական անասնաբուժական տեսուչ Տիմօֆէեվը պաշտօնով տեղափոխվում է Բաթում։

◆ Արտասահմանից ստացվեց Արամեական վիճակի մասին։

—

Վերևում և նախորդ յօդուածներիս մէջ ես շեշտել եմ, որ Բրիւսէլի համաշխարհային ցուցահանդէսում պարսկական բաժինը այնպէս պատուաւոր և փառաւոր կերպով պատրաստելու և ներկայացնելու աշխատութիւնը պատկանում է Բրիւսէլի պարսից գեսպան Մահմուդ-խան՝ Մօֆէխէմ-Սուլթանէին, որին աջակցել է և հայազգի Տիգրան-խան Թօրոյեանցի։ Մահմուդ-խանի մասին ես մի փոքր յետոյ կը խօսեմ. առ այժմ մի քանի խօսք կասեմ Տիգրան-խան Թօրոյեանցի մասին։ Սա շատ մասնակցում է համաշխարհային ցուցահանդէսներին, ուր ի ցոյց է դնում Պարսկաստանի գործերը, գլխաւորապէս թանգագին գորգեր և հնագիտական առարկաներ, և շատ ցուցահանդէսներում արժանացել է բարձր վարձատրութիւնների։ Այս անգամ ևս, Բրիւսէլի ցուցահանդէսում, նա շքեղ կերպով ներկայացրել է պարսկական գեղարուեստի առարկաները և արժանացել ամենաբարձր աստիճանի վարձատրութեան։ Տիգրան-խանը ունի շատ թանգագին հնագիտական ժողովածուներ՝ պարսկական դրամների, ձեռագիրների, կերպասների, գորգերի, զէնքերի և այլն։ Մուզաֆֆէր-Էդդին շահի ժամանակ նա նրա կրտսեր որդու՝ Սալար-ուդ-Դօվլէի խորհրդականը և քարտուղարն էր և հանգուցեալ շահը գնահատում էր նրա ծառայութիւնները։

Այժմ մի քանի խօսք Մահմուդ-խան Մօֆէխէմ-Սուլթանէի մասին։

Նա անծանօթ չէ Թիֆլիսին և Կովկասին, որովհետև 1907 թ. Կովկասի պարսից ընդհանուր հիւպատոս էր Թիֆլիսում և տեղափոխվել էր Կալկաթայից, ուր վարում էր դարձեալ պարսից ընդհանուր հիւպատոսի պաշտօնը։ Նրա աւագ եղբայրը՝ Իսահակ-խանը՝ առաջ դեսպան էր Վիէննայում, յետոյ նշանակվեց դեսպան Պետերբուրգում, իսկ այժմ դեսպան է Հռոմում։ Մահմուդ-խանը Թիֆլիսի հիւպատոսութիւնից կոչվեց դեսպանի պաշտօնի Բրիւսէլում։

Ես գիտէի, որ Կալկաթայում, երբ հիւպատոս էր, նա մեծ համակրութեամբ էր վերաբերվում հայերին և մեծ համակրութիւն էր վայելում հայկական գաղութում։ Թիֆլիսում ես ուրիշ չէի ունեցել ը մօտոյ ծանօթանալ նրա հետ և նրա հայացքների հետ։ Բրիւսէլում ես ունեցայ այդ առիթը, հանդիպելով նրան ցուցահանդէսներում, կօնգրէսներում և մի քանի անգամ առանձին տեսակցելով նրա հետ ու երկարօրէն խօսելով Պարսկաստանի գործերի մասին։ Եւ ես տեսայ նրա մէջ մի երիտասարդ դիպլօմատ, կրթված, լուսամիտ, վառված հայրենասիրական գաղափարներով, ծանօթ և հմուտ իր հայրենիքի դրութեան, պատմութեան, ցաւերի և կարիքների հետ, լեզուագէտ, համոզված կուսակից եւրօպական կուլտուրայի և Պարսկաստանի վերածնութեան՝ այդ կուլտուրայի հիման վրա։

Մահմուդ խան շատ առողջ և լուրջ կարծիքներ էր յայտնում Պարսկաստանի այժմեան քաղաքական դրութեան և այն պատճառների մասին, որոնք առաջ բերին նրա այդ դրութիւնը։ Եւ լսելով նրան, մարդ ակամայ մտածում էր, թէ ինչի համար է այս երիտասարդ պետական գործիչը, այս հայրենասէրը մաշում, անցնում իր օրերը և ժամանակը Բրիւսէլի մէջ, ուր, պարսիկ դիպլօմատի և նեղայացուցչի համար շատ քիչ գործ կայ կատարելու, մինչ այնտեղ հայրենիքում այնքան ահագին գործեր կան կատարելու, մինչ հայրենիքը պէտք ունի այդպիսի կրթված, ընդունակ, սրտացաւ զաւակների, որոնք կարող էին ահագին ծառայութիւններ մատուցանել գործիչների պակասութիւնից հեծեծող, տառապող երկրին։

Եւ հէնց դրա մէջն է կայանում Պարսկաստանի գլխաւոր դժբաղդութիւնը։

Այս րոպէին, երբ մայր երկրում գործիչների, կրթված, հայրենասէր և ձեռնհաս երիտասարդների սով է, երբ կառավարութիւնը դիմում է եւրօպացիներին, որպէսզի գան իր երկրում կարգ և կանոն հաստատեն, վճարում է նրանց ահագին ռոճիկներ և յաճախ այդ եւրօպացի խորհրդականների հիւանդանոցի վիրաբուժական բաժանմունքի գործիքների մի մասը։

◆ Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկերութեան գլխաւոր խորհրդի վերջին նիստում որոշվել է հանգուցեալ իշխ. Ի. Ճավճավաձէի կտակած տունը, Անդրէեվսկայա փողոցում, նուիրել Թիֆլիսի ազնուականութեան հողային բանկին։

◆ «Т. Л.»-ը լսել է, որ Բագուի Գրիգօրի եպիսկոպոսը անկախ պաշտօն է ստանում Կենտրօնական Ռուսաստանում։

◆ Մեզ խնդրում են յայտնել, որ Սանահինի դպրոցի համար վարժուհին արդէն վարձված է։ Պատասխան չը ստացողներն ազատ են համարվում։

◆ Կովկ. Հայոց Հրատար. Ընկ. խմբագրական մասնաժողովը խնդրում է մեզ յայտնել, որ Ընկերութիւնը որոշել է հրատարակել Էմիլ-Զօլայի «Ժերմինալ» և Զ. Դիկենսի «Օլիվեր Տվիստ» վէպերի հայերէն թարգմանութիւնը ընագիրներից։ Թարգմանել ցանկացողները թող բարեհաճեն մի քանի երեսի թարգմանութիւնը ուղարկել որպէս նմուշ՝ Тифлисъ, Кавказское Армянское Издательское Общество.

◆ Կայսերական Կովկասեան Դիւղատնտ. Ընկերութեան խորհուրդը այս օրերս հարցական թերթիկներ ուղարկեց այն նահանգները, ուր սկսում էր ուղարկել յիշեալ թերթիկներից, որոնց մէջ շինական հասարակութիւնները գրելու են անցեալ տարի ստացված հացահատիկի և խոտի բերքի հետևանքների մասին։

◆ Կովկասագիտութեան բարձր դասընթացքները կը բացվեն հոկտեմբերի սկզբներին։

◆ Այսօր իր գործունէութիւնը սկսում է «Էսպէրանտօ» ընկերութիւնը։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Փօքօլէվսկայա փողոցում, № 53 տունը ապրող Թիֆլիսեցի Կօնստանտին Դիմաչէնկօն յայտնեց ոստիկանութեան, որ սեպտ. 15-ի ցերեկ. ժամը 11-ին նրա բացակայութեան ժամանակ անյայտ մարդիկ նրա բնակարանից կեղծ բանալու օգնութեամբ գողացել են 170 ռուբլու զանազան իրեր — շորեղէն, ոսկեղէն, արծաթեղէն։

◆ Սեպտ. 17-ին Սուրբ-Սարգսի վերելքում № 16 տանը խօլերայից մեռաւ Թիֆլիսի տոմսական ազատական Փարատիզ բէկ Հէզլիրօվը՝ 68 տարեկան։ Իրակը թաղվեց մահմեդականների գերեզմանատունը։ Մեռածի բնակարանը ամրատնված է։

◆ Սեպտ. 17-ին VII քաղաքամասի ոստիկանական պաշտօնեաները շուրջկալի ժամանակ ձերբակալեցին 30, III քաղաքամասում՝ 14 անգործ և անանցագրուղթ մարդկանց։

ԻՐՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

«Թայֆուն», դրամ. 4 գործ. Ռուս սիրոյների ներկայացում Զուբալովի թատրոնում։

Թայֆուն։

Դա փոթորիկ է նշանակում եապօնացոց լեզուով։

Թայֆունը անցաւ Եապոնիայի վրայով և կործանեց շատ տներ, սպանեց շատ մարդիկ. բայց 50 միլիոն եապօնացիք նորից կը շինեն այդ կործանված տները և կը գան նոր մարդիկ և կեանքը կընթանայ իր առաջվայ ուղիով։

Այդպէս է ասում գործող անձերից՝ եապօնացիներից մէկը այդ սենսացիոն դարձած պիէսայում։

Սրա մէջն է եապօնացոց աշխարհահայեցողութեան ամբողջ միջուկը։

Այստեղ ամբանում է եապօնացու աշխարհահայեցողութեան գլխաւոր յենակէտը՝ մէկը կը գնայ, կը գայ միւսը նրա տեղը և կը նորոգի, կը շինի փչացած կեանքը։ Եւ դա է գաղտնիքը, որ եապօնացին անվրդով ընդունում է մահը, մահվան վրա նայում իբրև մի շատ հասարակ, բնական երևոյթի վրա։

Պարտքը դէպի հայրենիքը, 50 միլիոն ժողովրդի շահերը եապօնացու կեանքի ամենագլխաւոր նպատակն է, կեանքի գլխաւոր ոգին։

Եւ նա կախաղան է գնում պարտքի համար, մահվան գիրկն է ընկնում հերոսանալու համար։

Հայրենիքն է այդ պահանջում, պարտքն է այդ պահանջում։

Հեղինակը բաւական գունաւոր պատկերացնում է երկու աշխարհահայեացք, երկու կուլտուրա՝ եւրօպական և արևելեան-եապօնացու կուլտուրան։

Եւ իրաւ ուժեղ կերպով իր համակրութեամբ թեքվում է դէպի «սպիտակ» մարդու կուլտուրան, աշխարհահայեցողութիւնը։

Նամանաւանդ այդ նկատելի էր վերջին գործողութեան մէջ՝ պիէսայի գլխաւոր հերոս Տեկերմայի մահվան րօպէներում, երբ նրան շրջապատող հայրենակիցները միայն և միայն պարտքի մասին են յիշեցնում նրան և սառնասիրտ հանդիսատես լինում մարվող մօրալ կեանքի վերջին ճիգերին, այն ինչ ֆրանսիացի գրողը և ֆրանսիացի դերասանուհին ջերմացնում են նրան իրանց սիրող և զգայուն զգացմունքով։

Եւ թեքվում է «դեղին» մարդը «սպիտակ» մարդու ուսերին և սփոփում իր պարտքի ճիրաններում կաշկանդված հոգին։

Եւ վերջին բօպէին, նա աղաչում, պաղատում է «սպիտակ» մարդուն չը գնալ, չը հեռանալ իր մօտից։

Պարտքը պարտք է, բայց մարդը, կենդանի մարդը ապրել է ուզում, որքան էլ նրան չը կապեն հայրենիքի և 50 միլիոն մարդկանց համար ապրելու պարտքով։

Պիէսը ունի շատ շարժող, յուզող տիպեր և հեղինակը կենդանի ու տաղանդաւոր կերպով կարողացել է լուծել իր առաջ դրված հարցը։

Կարա-Դարվիշ

ԹԱՏՐՕՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Արքունական թատրօնի օպերային ներկայացումները էժան գներով լսելու համար, Անտոն Էյսէնմայրը հնարաւորութիւն է տուել կառավարական և հասարակական հաստատութիւնների ծառայողներին ձեռք բերել այժմեանից այդ նպատակով պատրաստված յատուկ տոմսակներ։

◆ Այսօր երեկոյեան կայանալու է Շալիապինի կօնցերտը։ Մի տարօրինակ կարգադրութիւն է արված նրա կամ կարգադրիչների կողմից. որոշված է տոմսակներից շատերը արկածախնդիր են հանդիսանում, այդ ժամանակ Յովհաննէս-խան Մասեհեանի, Մահմուդ-խանի, Իսահակ-խանի, Մելքոն-խանի պէս պետական հմուտ և արժանաւոր գործիչներ, որոնց ամեն մինը կարող էր մի մինիստրութեան գլուխ կանգնել, մնում են գրեթէ անգործունեայ Բերլինում, Բրիւսէլում, Հռոմում, ուր ասպարէզը նրանց գործունէութեան համար շատ նեղ է։ Ճիշդ է, նրանք իրանց յատկութիւններով բարձրացնում են Պարսկաստանի յարգը եւրօպացիների աչքում, բայց ինչ օգուտ, որ հայրենիքը չէ օգտվում նրանց ընդունակութիւններից և ձիրքերից։

Այդպիսի անձնաւորութիւններից մինն է և Մահմուդ-խան Մօֆէխէմ-Սուլթանէն, որի մասին ես կարդացի մի օր Բրիւսէլի «Indépendance Belge» լրագրի մէջ հետևեալը, որ ասածներիս ապացոյց է (№ 11 յուլիսի 1910).

«Մենք հաճոյք ունենք ծանօթացնելու մեր ընթերցողներին, որ Թէհրանում սկսել է հրատարակվել մի նոր լրագիր «Պարսկական անկախութիւնը» վերնագրով, ֆրանսերէն։ Նոր օրգանը, որ միաժամանակ հայրենասիրական է և ազատամիտ, պարզունակում է շատ շահեկան տեղեկութիւնների մի ամբողջ կոյտ։ Ոգևորված նոր ոգով, որ թափանցել է այդ հիանալի երկրի մէջ, ուր սահմանադրութիւնը թռիչք է տուել առաջադիմութեան, կերպարանափոխելով նախկին իրերը, նա կոչված է հեղինակութիւն գործելու և մի փայլուն ապագայ ունենալու։

«Աւելացնենք, որ նորին վսեմութիւն միրզա Մահմուդ-խանը, Պարսկաստանի այժմեան ընտիր դեսպանը Բրիւսէլում, որ մի ճշմարիտ ժողովրդականութիւն է վայելում բոլոր միջավայրերի մէջ, կարողացել է ստեղծել, իր գալուց ի վեր, իր բարձր ընդունակութիւններով, տակտով, սիրալիրութեամբ, իր գործունէութեամբ և հայրենասիրական եռանդով՝ համակրութեան մի մեծ շարժումն Պարսկաստանի համար, որ առաջ անծանօթ էր և որին նորագոյն քաղաքական դէպքերը աւելի ոյժ տուին»։

Տեսակցելով Մահմուդ խանի հետ, ես չիշեցի, որ Կալկաթայի հայ գաղութը նրա մեկնման ժամանակ տուել էր նրան մի ուղերձ, որի տպագրութիւնը Պարսկաստանի և Հնդկաստանի հայերը խնդրել էին մի քանի անգամ «Մշակից»։

Մահմուդ-խանը յօժարութեամբ ցոյց տուեց ինձ այդ ուղերձը. որ գրված է պարսկերէն, հայերէն և անգլիերէն և գրված մի արծաթէ գեղաքանդակ տուփի մէջ։

Առաջ եմ բերում այդ ուղերձը նոյնութեամբ.

«Նորին վսեմութիւն Միրզա Մահմուդ-խան, Մօֆախամ-էս-Սալթան, ընդհանուր պարսկական հիւպատոս։

«Վսեմութիւն Ձեր,

«Մեք՝ անդամք հայ հասարակութեան Կալկաթայի՝ ազերսեմք մատչել ի վսեմութիւն Ձեր յայսմ նախընթաց երեկոյի մեկնելոյ Ձերոյ ի Հնդկաստանէ և յայտնեմք զտխրագին ցաւ մեր ընդ անջատումն Ձեր ի մէնջ։

«Ցընթացս վեցեակ ամացս յորս կալեալ Ձեր վարեցիք զբարձրաստիճան պաշտօն ընդհանուր պարսկական հիւպատոսութեան ի Հնդիկս ըստ կարի Ձերում ջան ի գործ դրեցայք նպաստամատոյց լինել Անդամոց Հայ Հասարակութեան որ աստ և որ այլուր։ Սկզբնաւորիչ հիմնադիր հանդիսացեալ Ձեր միութեանն որ կոչի «Անճօմանէ Մօզաֆֆիրի» հանապազ բերկրարեալ լինէր Ձեզ ընդունել ի ժողովս Ձեր զԱնդամս մերոյ Հասարակութեան։

«Ձեր՝ անընդհատ և մտադիր ի թիկունս հասեալ ձեռնտու եղէք մանկացեալ անդամոց ոմանց Հասարակութեան մերոյ՝ որոյ եղեալ ի ժամ հաստատել զերեսս իւրեանց ի Պարսկաստան և այլուր՝ անհրաժեշտ լինէր անցանել ընդ Բումբայ։

«Մեր ցաւագին տրտմեալ ընդ անջրկատումն Ձեր՝ և ընդ որ նմին հետևորդ լեցի— զրկումն մեր, ասեմ, ի Ձէնջ, սակայն և այնպէս բերկրեալ հրճուիմք զի Նորին Կայսերական Վեհափառութիւն, Մօզաֆֆէր-Էդդին Շահ ամբարձեալ է զՁեզ յաւագութիւն, յանձն առնելով Ձեզ զկառավարութիւն այնքան մեծի նահանգին Կովկասու։ Ցուսացեալ եմք զի ի նոր գիւանական պաշտաման Ձերում յարատեւեսջիք օգտաւէտ յարաբերութիւնս հաստատել ի միջի մեր և այլոց ցեղից, նաև ակն ունիմք զի ամենայն գործս մեր աշխուժիւ շահախնդիր լիջիք առ ի յառաջադէմ ընծայել զայնս։

«Հապ ճն նուիրեսք Ձեզ զհրաժարական ողջոյն մեր և մաղթեսք զի Վերախնամն Տեսչութիւն զեղցէ ի Ձեզ յապագայի զամենայն շնորհս իւր և պարգևեսցէ Ձեզ յամս յաժայր երջանիկ և աջող վարկ կենցաղ։

«Առ ի ստորև արձանագրութիւնս է պատճէն առաջադրեալ ի Մատաժողովոյ Հայոց Եկեղեցւոյ ի 15 Մարտի 1906 ամի։

«Առաջադրութիւն։

«Վերակացուք ազգ արարեալ են Մատնաժողովոյն զի Նորին վսեմութիւն Մահմուդ-խան՝ ընդհանուր պարսկական հիւպատոս ի Հնդիկս հանդերձեալ է մեկնիլ ի 1 Ապրիլ 1906, առ պաշտօնավարել ի Տիզիս, ուստի առաջադրեցաւ զի ի դիմաց հասարակութեանն՝ պատշաճաւոր ճառ ինչ եղեալ յարծաթի արկեզ՝ ուղերձեսցի նմա ի նշան մեծարանաց վասն բարեացակամութեան նորա առ Հասարակութիւն մեր թէ ի Հնդիկս և թէ յամենայն կողմանս։

«Մնասք,

«Վսեմութիւն Ձեր

«Ի դիմաց հայ հասարակութեան՝

«Ցարութիւն Ստեփանոսեան

«Մինաս Վ. Աբգար

«Վերակացուք հայոց եկեղեցւոյ»

Կալկաթայի հայկական գաղութի այս ուղերձը ցոյց է տալիս, որ արդարև Մահմուդ-խան անկեղծօրէն ցանկացող է եղել իր պաշտօնավարութեան մէջ հայերի և պարսիկների համերաշխութեան։

Մեր յարգանքը նրան, որ իր այդ վարմունքով ցոյց է տալիս պետական մարդու հմտութիւն։

Հ. Առաքելեան

պատասխանը 8-ից սեպտ. № 14. «Ի պատասխան ձեր օգոստոսի 30-ի 1910 թ. գրութեան հոգաբարձութիւնս յայտնում է, որ չէ ընդունում ինչպէս **-ի, նոյնպէս և զանազան անհատների այդ ձեւի առաջարկը» (ընդգծումը հոգաբարձութեանն է)։

Մ. ա.-ք. Մելիան
Յակոբ Մեղաւորեան
Գ. Մ. Շահնազարեան

ՀԵՌԱԳՐԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ
17 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գիշերս «Церковь всѣхъ скорбящихъ» եկեղեցու տանիքի վրա ձերբակալվեցին 2 անյայտ մարդիկ, որոնք խոստովանեցին, թէ իրանք մտադիր էին յափշտակել գլխաւոր սրբապատկերի գոհարները, որոնց գինը որոշված է 600,000 ռուբլի։

Ֆինանսների մինիստրութիւնը մինիստրների խորհրդին ներկայացրեց զինուորական տուրքի նախագիծ, որի համաձայն բոլոր նրանք, որոնք ազատվում են զինուորական ծառայութիւնից, պարտաւոր են վճարել յատուկ տուրք։ Հիմնական տուրքը մտադրութիւն կայ որոշել 5 ռուբլի ամեն մինից։

Առևտրի մինիստրութիւնը մինիստրների խորհրդին առաջադրութիւն արեց կազմակերպելու Պետերբուրգի պօլիտեխնիկումում օդագնացութեան դասընթացքների ինստիտուտ և բաց թողնելու 1911 թ-ից ամեն տարի 12,000 ռուբլի դասընթացքների պահպանութեան համար։

Դատաստանական պալատը Դումայի նախկին անդամ Սեդէլնիկովին վերբերգեան կոչը ստորագրելուն համար դատապարտեց 3 ամսով բանտարկութեան, հաշուելով նախնական 7 շաբաթ բանտարկութիւնը։

ԿԻԵՎ։ Ոմանի գաւառի Բուկ արուարձանում այրվեցին ամենաաղքատ հրէաների 47 տներ։ Անապրուստ մնաց 150 ընտանիք։ Նահանգապետը թոյլ տուեց հանգանակութիւն բանալ։

ՈՒՖԱ։ Ուկտէեվա գիւղում հրդեհը ոչնչացրեց 60 տուն, 10,000 պուդ հացահատիկ, ժղկիթը, շատ կրպակներ ապրանքներով։

ՎԱՐՇԱՎԱ։ Լեհական սոցիալիստական կուսակցութիւնը կազմակերպեց էլեքտրաքարշի ծառայողների գործադուլ։ Ծառայողները պահանջեցին աւելացնել աշխատավարձը, որոշելով ամսական ռոճիկ մինիմում 40 ռուբլի առաջին տարում և 60 ռ., յետագայ տարիներում, սահմանել ութժամեայ բանուորական օր, վերացնել տուգանքները։ Ոստիկանութիւնը պարզում է և կալանաւորում է գրգիչներին։

ԱՍՏՐԱԽԱՆ։ Մի քանի չարագործներ փորձեցին կողոպտել Իսայէվի ձկան խանութի գրասենեակը։ Հետապնդման ժամանակ մի քաղաքապահ սպանվեց, միւսը ծանր վիրաւորվեց, երկուսը՝ թեթև։ Չարագործները փախան։

ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳ։ Պերմի երկաթուղագծի վրա վագոնում նստած ժամանակ ատնաջող մահափորձ կատարվեց Գօնդատտիի արշաւախմբի անդամ Միխինկիի կեանքի դէմ։ Չարագործը փախաւ։

Ժամ. խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Զինուորական մասնագետ-բժիշկների
Երեւեկ հիւանդների համար
Զանգի մեծ փողոց, № 3, Ալէքսանդրեան այգու մօտ
ԽՈՐՀՐԴԻ ՎՃԱՐՆ Է 50 ԿՕՊ.
Տելեֆոն № 481.

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ. ժամը 9½-ից մինչև 5-ը ցերեկվայ։

ԱԽՎԼԵԴԻԱՆԻ—ներքին և երեխաների հիւանդ., ամեն օր՝ 11—12 և կէսը ցեր.։
ՈՒԿԼԱԴՆԻԿՕՎ Ի. Օ.—ներքին հիւանդութիւններ, ամեն օր՝ 4—5 ժամը ցեր.։
ՎՆՈՒԿՕՎ—խիրուրգիական հիւանդութիւններ, ամեն օր՝ 12—1 ժ. ցեր.։
ՐԻԴԷԼ—ներքին և երեխ. հիւ., ամեն օր՝ 3—4 ժ. ցեր.։
ՄՕՆՍԷ—երեխ. և ներքին հիւ. ամեն օր՝ 1—3 ժ.։
ԽԱՏԻՍՕՎ Ն. Դ.—մանկաբարձ. և կանանց հ., ամեն օր՝ 4—5 ժ., բացի կիրակի և երեքշ. օրերից։
ՆՕՎԻՑԿԻՑ—մանկաբարձ. և կանանց հ., ամեն օր՝ 1—2 ժ.։
ՍԱՐԱՊ—ներքին և երեխ. հիւ., ամեն օր՝ 12—1 ժ.։
ՏԷՏՐԱԶԷ—սիֆիլիս, վէներ., կաշուի հիւ., ամեն օր՝ 1—3 ժ. ցեր.։
ԱՍԳԻՍՕՎ Ն. Մ.—ականջի, կոկորդի և քթի հիւ., առ. ժամը 1—2 ը ցեր.։
ԿԻՆ Բ.Ժ. ԻՕՍՍԷԼԻԱՆԻ—կանանց հիւ., երկուշ., չորեքշ., ուրբ., կիրակի՝ 11—12 ժ.,
ՎԵՍԵԼՕՎԶՕՐՕՎ Ն. Ն.—խիրուրգ. հիւ.։ ամեն օր՝ ցեր. ժամը 2—3-ը։
ԶՈՒԴՆՕՎՍԿԻ—ջղային, հոգեկ. հիւանդ. և էլեքտրոտէրապիա., ամեն օր՝ բացի կիրակի օրերից՝ ցեր. ժ. 4—5-ը։
ՄԿՐՏՈՒՄԵԱՆ. — սիֆիլիս, ժիդասեռ., վէներ. և կաշուի, առ. օր՝ 10½—11 ժ. առ.։
ՊՕՆԴՕԵՎ—ջղային հիւ. և էլեքտրոէլեքտրապիա. ամեն օր, ժամը 11—12-ը։

Համախորհուրդ, օպէրացիաներ, մասսաժ, ծաղկի պատուաստումն, անալիզ, հիպնոզ, սանդուղների և ծառաների քննութիւն—առանձին վճարով։ Սիֆիլիսի վերաբերմամբ արեան հետազօտութիւն ըստ Wassermann-ի։
(Կ.) 356. 100—52

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելիամինօվսկայա փող. № 8
(Կ. Հ.) 564. 100—45

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
առանձնապէս ՍՏԱՄՈՔԻ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր { 10—11 ժ. առ. (երեխաների) / 5—7 ժ. երեկ. (ընդհանուր)
Միքայէլեան փող., № 36. Տելեֆոն № 38
(Ե.Հ.Կ.) 909. 100—19

ՖԷԼԴՇԵՐԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
ՄԵԳԻՑԻՆԱՅԻ
ՖԷԼԴՇԵՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Կատարում է սրսկումներ, վէրքի փաթաթումն, դեղերի քսումն (втираніе) և այլն։ Բժշկութիւն տղաւարդի սեռական թուլութեան, անկարողութեան, սերմնահոսութեան եւ երազախաբի։ Մասսաժ էլեքտրական և ձեռքով։ Բժշկական մարմնամարզութիւն։ Օտարերկրեայ հիւանդներին տալիս է խորհուրդներ և ցոյց է տալիս հմուտ մասնագէտ բժիշկների—վէներական, ներքին և այլ հիւանդութիւններ։ Ընդունելութիւնը 3—4½ ժամը ամեն օր։ Շաբաթներին ձրի միմիայն չորեքշաբթի օրերը։ Վօրոնցովի արձանի մօտ, Семеновская ул. № 9.
(Կ. Հ.) 913. 50—12

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՂԲ. ԱՎՍԱՐԳԻՍՕՎՆԵՐԻ
այլևս բաց է թողնում արաւասահմանեան, ռուսական և տեղական լաւ տեսակի պըտղատու ծառեր ու դեկօրատիվ բոյսեր։
Հասցէն՝ Ст. Скра (Зак. ж. д.).
Կատալօգն ուղարկվում է ՁՐԻ։
(Կ. Հ.) 1068. 15—4

Վաճառվում է
ԴԱՍԱԳԻՐՔ ԿՐՕՆԻ Ա. տարի
հայ-ռուսերէն բառգրքով—
ռուսախօս հայ աշակերտների համար։ Թոյլատրված է հոգևոր իշխանութեան և կովկասեան պ. հոգաբարձուի կողմից։
Գինն է 20 կոպ.
Դիմել՝ Ставрополь—губ., Священ. С. Теръ-Ованесьянцу.
(Օ.Մ.) 1094. 3—1

Սուխումի շրջանի հայ գիւղի համար հարկաւոր է
շրջանաւարտ եւ փորձառու
ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ,
որը պէտք է իմանայ նոյնպէս պատարագի երգեցողութիւն։ Ռոճիկը 450—500 ր.։ Մանրամասնութիւնների մասին դիմել այս հասցէով. Сухумъ, Армяно-григор. благочинному священнику Егише Теръ-Егіязарянцъ.
(Ա.Օ.) 1100. 3—1

Եղեսիայի (Մօզդօկի շրջան) հայոց դպրոցների համար
հարկաւոր է
ՄԻ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ,
որ աւանդելու է ձեռագործ, ռուսերէն և այլ առարկաներ՝ 25—26 դասով։ Ռոճիկն է 300 ռուբլի և բնակարան։ Շտապել դիմել՝ м. Эдиссія, черезъ Моздокъ. Попечительству Армянскихъ училищъ.
(Ա.Օ.) 1101. 2—1

Գլաւն. սկլադ՝ Գ. Ֆ. Յուրգենս, Մոսկվա
Золотая медаль Лондонъ 1893 г.
ОСТЕРЕГАТЬСЯ ПОДДѢЛОКЪ!
ПРОВИЗОРА
Г. Ф. ЮРГЕНСЪ
БОРНО-ТИМОЛОВОЕ МЫЛО
ОТЪ ПОТА, ЗАГАРА, ВЕСНУШЕКЪ, УГРЕЙ, ПРЫЩЕЙ И ЖЕЛТЫХЪ ПЯТЕНЪ.
БЛАГОВОННОЕ ТУАЛЕТНОЕ МЫЛО ВЫСШАГО ДОСТОИНСТВА
ПРОДАЕТСЯ ВЕЗДѢ
1/1 КУС. 50 к. 1/2 КУС. 30 к.
(М. 4375) 21. 24—16

Հրատարակ. **„ԱՐԱՐԱՏ“** Գրավաճառ.
Լոյս տեսաւ և վաճառվում է
«ԴԱՍԱԳԻՐՔ ԲՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ»
Ա. տարի
Յ. Տ. Մարտիրոսեանի և Ռ. Օհանջանեանի կազմած
համաձայն «Հայոց եկեղեցական տարրական դպրոցների ուսումնական ծրագրի»։
60 նկարներով
(Մարդ, կենդանիներ, բոյսեր, հանքեր և բնական երևոյթներ).
Գինը 30 կոպ.
Դուսարով գնողներին կանվի սովորական զեղչ։
Դիմել՝ Эривань, Книж. магаз. „Араратъ“.
(Ա.Օ.) 1071. 10—5

Մի համայնարանաւարտ, փորձառու
ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉ
ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է
բոլոր դպրոցների համար, թէ հայոց և թէ ռուսաց։
Գները չափաւոր են։
Դիմել՝ Абасъ-Абатскій пер. № 10, д. Тотоянца, верхн. этажъ.
(Օ. Ս.) 1058. 5—5

ՈՎ ԽՆԱՅՈՒՄ Է ԿՕՊԻԿը,
ԿՈՐՑՆՈՒՄ Է ՐՈՒԲԼԻՆԵՐ!!
Մի գրամէջ հրաշագործ էժանութիւններով, որովհետև կորցնում էք ձեր փողերը։
3 ՐՈՒԲԼԻ 90 ԿՕՊԵԿՈՎ
ուղարկում եմ իսկապէս ամուր և գեղեցիկ բրդէ կոստյում «ՎԱՇԻՆԳՏՈՆ», 4¼ արշին, տպամարդկանց աշնանային ամրոզի պլեստացու։ Գոտորը գործված է մօդային մուգ-բառակուսով, շերտաւոր կամ բծեր ունեցող նախշերով, սև, մուգկապոյտ, շղանակագոյն կամ ձիթագոյն։ Եվ միասն «ՎԱՇԻՆԳՏՈՆ» կոստրի ամենալաւ տեսակը՝ 4¼ արշ.—4 բուր. 75 կօպէկով։ ԵՐԱՐԵԼԸ ԵՒ ՀԱՄՆՊՐԱՇԱԽՈՔԸ ԻՄ ՀԱՇԻՒՆ։ Ուղարկում եմ պօստով, վերագրիր վճ. և ԱՌԱՆՑ ԿՆԽՈՒՆՔՆԵՐԻ։ Միբլրի համար ամեն մի կոստրին ուել հաշվում է 75 կ.։ Ապրանքը եթէ դուր չը գայ՝ փողը վերադարձնում եմ։ Ով պատուիրէ 3 կամ աւելի կոստ՝ կցում եմ նաեւ լաւ ատատացու ՄԻԱՆԳԱՄԱՅՆ ՁՐԻ։
Պահանջները հասցէագրել՝ г. ЛОДЗЪ, № 170. М. Б. ТОРЧИНСКОМУ. Почт. ящ. 25.
Թղթակցութիւնները ռուսերէն։
(Կ.) (В. 57367) 1009. 5—4

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԽՈՇՈՐ ԷԺԱՆ ՎԱՃԱՌՔ
ԵԱՐՕՍԼԱՒԵԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ
Պ. Ս. ԴՕՐՕԺՆՕՎԻ
Միխայլովսկի պրոսպ., լութերականների եկեղեցու շարքում, նոր կառուցված ընդարձակ շինութեան մէջ։
Առաջին անգամ 6 օրով, այն է սեպտեմբերի 20-ից սկսած, նշանակված է
ԽՈՇՈՐ ԷԺԱՆ ՎԱՃԱՌՔ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-ին, 21-ին, 22-ին, 23-ին, 24-ին և 25-ին։
ԷԺԱՆ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՄԱՐ Նիժէգօրօդեան տօնավաճառից ստացված են ապրանքներ **200,000** ՐՈՒԲԼՈՒ, որոնց ֆիրման ձեռք է բերել պատահմամբ՝ շնորհիւ տօնավաճառում տիրող դանդաղութեան. հետևաբար այդ ապրանքները վերոյիշեալ օրերի ընթացքում կը ծախվեն
ԱՊՇԵՑՈՒՑԻՉ ԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ
Խանութի վիտրինաներում ցուցադրված են բոլոր բաժանմունքներից ապրանքներ, որոնց վրա նշանակված են
ԱՊՇԵՑՈՒՑԻՉ ԷԺԱՆ ԳՆԵՐ
Յայտնվում է ի տեղեկութիւն պ. պ. գնողների, որ էժան վաճառքի օրերը խանութը բաց կը լինի առաւօտեան ժամը 9½-ից մինչև ցեր. ժամը 2½-ը և երեկոյեան ժամը 4-ից մինչև ժամը 7-ը։
1099. 1—1 Պ. Ս. ԴՕՐՕԺՆՕՎ

Զգրաչէնի դպրոցի վարչութիւնը յայտնում է, որ նոյն դպրոցի IV բաժանմունքում ազատ տեղեր կան։ Խնդիրների ընդունելութիւնը կը շարունակվի մինչև ամսիս 25-ը։ Խնդրատուները ենթարկվելու են քննութեան։ Այդ դասարանի ուսման տարեկան վարձն է 15 ռուբլի։
Հոգաբարձութիւն
1082. 1—1

Հրաւէր
սեպտեմբերի 19-ին, կիրակի օրը ժամը 12-ին, պատարագից յետոյ, համաձայն հրամանի հոգևոր իշխանութեան, նշանակված է Մողնու ս. Գէորգ եկեղեցում ծխական ժողով նոր երէցփոխ ընտրելու համար։ Ուստի հրաւիրվում են յիշեալ եկեղեցու իրաւասու ծխականները ներկայ լինել ընտրութեան, ի նկատի առնելով, որ այդ ժողովը երկրորդ անգամը լինելով՝ համարվում է օրինական՝ որքան էլ լինի ներկայ եղողների թիւը։
Սիմէօն աւ.-քահ. Զէյրեկանց
(Ու.Կ.) 1076. 2—2

Հրաւէր
Այսօր 19-ին, կիրակի, առաւօտեան ժ. 11-ին, պատարագից յետոյ, Բեթղեհէմի ս. Աստուածածին եկեղեցում լինելու է երէցփոխական ընտրութիւն, քանի որ ներկայ երէցփոխ Վ. Ռ. Աւանեանցի երէցփոխական պաշտօնավարութեան ժամանակաժիջոցը լրացել է։ Ուստի սրանով հրաւիրվում են նոյն եկեղեցու բոլոր 25 տարեկանից աւելի արական սեռի ծխականները՝ ժամանակցելու վերոյիշեալ ընտրութեան, նշանակած օրը և ժամին։ Եթէ այս անգամ ժողովը չը կայանայ բոլոր ծխականների ⅕-ականը ներկայ չը լինելու պատճառով, երկրորդ ժողովը կը նշանակվի հետեւեալ կիրակի, և օրինաւոր կը համարվի՝ որքան և պակաս լինի ժողովականների թիւը։
Բեթղեհէմի ս. Աստուածածին եկեղեցու աւագ-երէց՝
Գէորգ քահ. Մեհրաբեան
(Ա. Օ.) 1089. 2—2

ՄԻ ԻՆՏԵԼԻԳԵՆՏ ընտանիքում (ուսուցիչ և ուսուցչուհի)
բնդունումեն
Գիշերօթիկ աշակերտներ։
Ընտանիքում գերմաներէն պրակտիկա։
Հասցէն՝ Елизаветинская 114, кв. 2.
(Ա. Օ.) 1051. 5—2

ԿՕՄԻՍՍԻՕՆԵՐԱԿԱՆ ՏՈՒՆ
Ա. Բարաչանեանի
ԲԵՐԼԻՆՈՒՄ
Ընդունվում են յանձնարարութիւններ ամեն տեսակ ապրանքներ գնելու և ծախելու։
Հասցէն՝ Berlin W. 8. Jager Strasse 6. A. Babadjanian.
(Հ. Կ.) 1035. 8—6

Երկրորդ տպագրութիւնով լոյս տեսաւ
„ԶՈՒԹԱՆԻԿ“
գրքոյկը (հինգերորդ դարի հայ կնոջ պատկեր) պատմական և կենսագրական մասերը աւելացած և բարելաւված։ Գինն է 15 կոպէկ։ Վաճառվում է Թիֆլիսի հայ գրավաճառանոցներում։ Ինձ դիմողները ճանապարհի ծախք չեն վճարում։
Հասցէ՝ Тифлисъ, Тюремному священнику Григорисъ Матинянцъ.
(Օ.Մ.) 1072. 3—3

Լոյս տեսաւ եւ վաճառվում է
Բժշկապետ ՄԻՆԱՍ ՄՈՒՐԱԴԵԱՆԻ
ՍԻՖԻԼԻՍ
Հանրամատչելի՝ ընթերցանութեան համար, պատկերազարդ.
Գինն է 30 կոպ.
Դիմել բոլոր գրավաճառներին, կամ հեղինակի բնակարան՝ Ртищевская № 1.
(Օ. Մ.) 1085. 5—1

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
ԲԱԿՈՒ, ugol Красноводск. и Меркурьевск., телеф. № 10—56.
Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական և առևտրական կրթութիւն և պատրաստել հմուտ հաշվապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։
Կուրսերում ուսանվում են՝ 1) Առևտրական թւաբանութիւն և թւաբանութիւն համբիչի վրա. 2) Հաշվապահութիւն արդիւնաբերական, զրօշմարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն. 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Դեղագրութիւն և արտագրութիւն (ուղղագրութիւն ձեռագրի). 7) Ուսուցումն գրամ մեքենայի մոտ։ Ցանկացողների համար՝ առանձին վճարով լեզուներ և ստենոգրաֆիա։
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից՝ ամենայն օր կուրսերում, առաւօտեան ժամը 9—12-ը և երեկոյեան 4—7-ը։
Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը (программа) տրվում և ուղարկվում են ԶՐԻԱԲԱՐ։ Դատարաքաղաքացիները դիմում են՝ Баку, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. (Չ.Կ.) 884. 20—15

Թիֆլիսի Նաւթարդիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը
սրանով պատիւ ունի հրաւիրելու պ. պ. բաժնետէրերին
ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ,
որը կայանալու է ներկայ 1910 թւի հոկտեմբերի 4-ին, երկուշաբթի, երեկոյեան ժամը 7-ին, Ընկերութեան գրասենեակում, Սօլօլակկայա փողոց, տուն Արաքելովի, № 9.
Զբաղմունքի առարկան կը լինի.
Գնել կամ կապալով վերցնել նոր նաւթային հողաբաժիններ և նոյնպէս՝ վաճառել կամ կապալով տալ Ընկերութեան պատկանելիք հողաբաժինները։
Եթէ ժողովը սահմանված ձայների քանակութեան պատճառով չը կայանայ, երկրորդ անգամ նշանակվում է նոյն տեղը, հոկտեմբերի 10-ին, կիրակի, առաւօտեան ժամը 11-ին, որը կը համարվի կայացած, ի նկատի չառնելով ձայների քանակութիւնը (§ 29)։
(19, 21, 2) 1098. 3—1

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐ. ՄԻՆԻՍՏՐ. ՏՅՕՐԻՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԴՏՆՎՈՂ
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայիլեան պր. 24/4.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտր. կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատեստատներ։
ԳՈՐԾՆԱԿԱՆ զրաղմունքները կատարվում են կուրսերում՝ Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձեւով կազմակերպված Muster-Comtori-ում։ Նիւթերն առնվում են իւայ կետերից։ Առարկաներն են. ա) ՊԱՐՏԱԳԻՐ.—1) Հաշվապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական), 2) Առևտրական թւաբանութիւն, 3) Քաղաքատնտեսութիւն, 4) Օրէնսդիրութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Թւաբանութիւն համբիչի վրա, 7) Վաճառագրութիւն, տրագրութիւն (ամենավառ ձեռքի ուղղումն). բ) ՈՉ-ՊԱՐՏԱԳԻՐ.—1) ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ, 2) տրագրութիւն, 3) գաղտիրագրաֆիա (բեմինգտօն և ուր.) և 4) առևտրական թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և գաս-գաս։ Ունկնդիրների թիւը շատութեան պատճառով բացվում է զուգընթաց բաժանմունք։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, առ. 10—2 ժ. և երեկ. 4—7 ժ.։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։
Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ
Հիմնել ենք առևտրա-յանձնարարական և ներկայացուցչական
ԳՐԱՍԵՆԵԱԿ,
որտեղ ընդունում ենք ընդհանրապէս գնացան առևտրական և առանձնապէս թարմ և չորացրած մրգեղէնի, կօնսերվների և պիւրէների սպառման յանձնարարութիւններ։
Խնդրում ենք դիմումի հետ չը ժամանալ նմուշներ ուղարկել։
Յարգանօք՝ Զ. Ն. ԽՐԽՐԵԱՆՑ ԵՒ Տ. Զ. ԲԱԽՇԻՆՕՎ
Հասցէներ { С.-Петербургъ, Петербург. ст., Большой пр. 92. / Тифлисъ, Елизаветинская, 192.

Типогра фія „Экономія“ Большая Ванкская № 3.